Հավելված
ՀՀ փոխվարչապետի
N 1047 - Ա որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր
«ԴԵԲԵՏԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ՓՈՒԼ ԵՐԿՈՒ»

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (COAF) նախատեսում է ՀՀ Լոռու մարզի, Փամբակ համանքի, Դեբետ բնակավայրում կառուցել նոր դպրոց, որը լինելու է տարածաշրջանում միակը: Դպրոցը նախատեսվում է կառուցել Դեբետ բնակավայրի «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տարածքում: Հաշվի առնելով այն փաստը, որ նոր դպրոցի նախագիծը արդեն պատրաստ է և նոր դպրոցի շին աշխատանքները պլանավորված է սկսել 2022թ. -ի գարնանը, որոշել ենք հունվար և փետրվար ամիսները, որոնք ոչ բարենպաստ ամիսներ են շինարարության համար, օգտագործել քանդման աշխատանքների իրականացման համար: Ծրագրի մաս է կազմում Դեբետի դպրոցի հարևանությամբ գործող Դեբետի վարչական կենտրոնի (համայնքապետարան) շենքը, որը հիմնադրամի ներդրումների արդյունքնում ձեռք է բերել բազմաֆունկցիոնալություն: Ծրագրով նախատեսվում է փոխարինել նորերով Դեբետ բնակավայրի վարչական շենքի առաջին հարկի դռներն ու պատուհանները:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով՝ օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Չիլդրեն Օֆ Արմենիա ֆանդ Ինք.», Նյու Յորք, ԱՄՆ, 149 5րդ ավենյու, սենյակ 500 (Children of Armenia Fund Inc. 149 5th Ave., Suite 500, New York 10010, USA. և դոկտոր Գարո Հ. Արմենը:
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (ՀՀ քաղ. Երևան 0010, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02569972):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	• ՀՀ Լոռու մարզ, Փամբակ համանք, Դեբետ բնակավայր • Համայնքային զարգացում

6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմում է 39,166,667 (երեսունինը միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ:
7.	Բարեգործություն ստացողը	ՀՀ Լոռու մարզի Փամբակ համանքի Դեբետ բնակավայրը և «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի 10-ից մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	• «Դեբեդի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գոյություն ունեցող շենքի և հարակից շինությունների քանդման և ապամոնտաժման աշխատանքներ ընդամենը 35,000,000 (երեսունհինգ միլիոն) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ արժողությամբ, 2022 թվականի հունվարի 10-ից մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը: • Դեբետ բնակավայրի վարչական (համայնքապետարան) շենքի նոր պատուհանների և դռների պատրաստման և տեղադրման աշխատանքներ ընդամենը 4,166,667 (չորս միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամ, առանց ԱԱՀ արժողությամբ, 2022 թվականի հունվարի 10-ից մինչև 2022 թվականի ապրիլի 1-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառա-յությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Ծրագրի շրջանակներում ներմուծումներ չեն նախատեսվում: Ծրագրի շրջանակներում կնքվելու են միայն շինարարական աշխատանքների կատարման, պատուհանների ու դռների պատրաստման և տեղադրման պայմանագրեր 39,166,667 (երեսունինը միլիոն մեկ հարյուր վաթսունվեց հազար վեց հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամի շրջանակներում:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:

12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Նախատեսվում է համագործակցել Հայաստանի Հանրապետության կառավարության, Լոռու մարզպետարանի, Փամբակ համայնքի և Դեբետի բնակավայրի հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու եւ գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

30.12.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ